է ժեզ համար, և ցոյց է տալիս թէ Հայն ձգտումէ հետևել այն բոլորին, ինչ որ վսեմ, ազնիւ և գեղեցիկ է. կամենումէ երախտագէտ լինել իւր բարերարներին. Այսօր այսպէս պարզ, թերևս անշուք, մի յարկի տակ, մի խումբ անձինքների մէջ, իսկ վաղը աւելի ճոխ, աւելի շքեղ, ազատ օդի մէջ, ընդհանրութեամբ, առաքեալների տօնը առաքեալների ձեռքով կատարելու.

Ա. Լ[illegible] Ո[illegible]
Կորիւն Ակրտչեան Մշեցի.

Դեկտ. 3. 1883
Ի Ճեմարան.

ԱՋԳԱՅԻՆ

ՍԻՄՖԵՐՕՕԼԻՑ.

Մելիտոպոլ կամ Խզլ-եաս, Տաւրիկեան նահանգի քաղաքներից մէկն է. Սիմֆերօպոլից դէպ ի Լօզովոյ գնալու (մօտ 8 ժամուայ) ճանապարհի վերայ, Երբեմն յետադէմ՝ բայց արդ շնորհիւ երկաթուղւոյ շատ յառաջացած է, և վաճառականութիւնն էլ խիստ բանուկ է, կենսական պիտոյքն՝ բաղդատելով ուրիշ քաղաքների հետ կարի մատչելի. Մելիտոպոլում զանազան ազգերի թուում գտնվումէ նաև Հայոց ազգի փոքրիկ խումբ, որ բաղկացած է մօտ 40 ընտանիքից. Ունի մի քահանայ և մի փոքրիկ անշուք աղօթատուն ընդարձակ բակով՝ քաղաքիս ամենագեղեցիկ տեղում. Այս տարի Հոկտեմ. ամսոյ 15ին կատարուեց Մեծարգոյ Մահտեսի Աղա Աւետիս Ս. Խլէպնիքեանց բարեպաշտ անձին սեպհական ծախքով կառուցանելիք եկեղեցւոյ հիմնարկութեան օրհնութիւնը. Պ. Խլեպնիքեան առատաձեռն բարեգործութիւններով սկսեալ 1856թ. մինչ ցօրս համարեա թէ չէ դադարեցրել իւր ջերմ և Աստուածահաճոյ նուէրները՝ Աստուծոյ սուրբ տաճարները զանազան զարդերով փառաւորեցնելու այլ և այլ քաղաքներում. Ինչպէս մի քանի տարի առաջ տեսնելով Սիմֆերօպոլի Եկեղեցւոյ խաչկալի անշուք և հնոտի դրութիւնը, կանգնել տուեց իւր ծախքով նոր ոսկեզօծ մի խաչկալ սրբոց ութը գեղանկար պատկերներով Պ. Պետրոս Թօփալեանցի երեսփոխանութեան ժամանակ և նորա իսկ միջնորդութեամբ. այս վերջինի վերայ միայն ունեցաւ նա ծախք մօտ 1400 մանէթի. իսկ Սիմֆերոպոլի հին խաչկալը հաստատուեց Բահչէսարայի Հայոց Ս. Եկեղեցու մէջ՝ ուր առաջ հասարակ սիւները, իրանց վերայ կպցրած լոկ թղթերով էին ծառայում խաչկալի. Նոյն եկեղեցւոյ վերանորոգութեան համար նուիրատու եղան Պ. Խաչատուր Պոյաճեանց ընծայելով մօտ 150 մանէթ, և Դշխուհի Տիկին Փոփովի ընծայելով

մի մեծ պատկեր Վերափոխման Ս. Աստուածածնի ի յիշատակ հանգուցեալ առն իւրոյ Յարութիւնի Փոփովեանց։ Նոյն աղա Խլէպնիքեանցը իւր ծախքով բերել տուեց Օդեսայից մի նորաձև գեղեցիկ Մեռելակառք (котафалкъ) և ընծայեց տեղւոյս եկեղեցւոյ աղքատաց գանձանակին այն պայմանաւ, որպէս զի կարողութեան տէր ննջեցեալներից ստացուած վարձով վերցուի աղքատների մարմինը և աւելացած գումարը մտնի աղքատաց գանձարանը։ Դորա համար պատրաստեց նաև իւր ծախքով երկու զոյգ զգեստ մահուդից (սգաւորի) թէ ձիանց և թէ ձիավարաց համար։ Այսպէս յիշեալ Խլէպնիքեանցը չէ անցկացնում տարի առանց որ և իցէ բարեգործութեան, և եթէ նորա անունը չէ հոչակուել, պատճառն է իւր անփառասիրութիւնը։

Վերոյիշեալ բարեգործ Մահտեսի Պ. Ա. Խլէպնիքեանց Աղան շարժած լինելով բարի նախանձով՝ ասկէ քանի մի տարի առաջ տեսնելով Սիմֆերոպոլի Հայոց ուսումնարանի նահապետական շինութեան մերձ յանկումն լինելը, մտքում դրել էր նորան ևս ձեռք զարնել, և մինչ խորհրդակցումէր այդ մասին իւր մտերիմ Պ. Թօփալեանցի հետ, ոմանք խոչընդոտն եղան, ուստի և սա փոխեց իւր նպատակի հետ և գործը։ Այսինքն, խոստացաւ փոխանակ դպրոցի կանգնացնել մի նոր եկեղեցի Մելիտոպոլ քաղաքում բնակող Հայ եղբարց համար։ Իսկ նորա Մեծ. խորհրդակից Թօփալեանց Պարոնը խոպան ետ կենալով Սիմֆերոպոլի մէջ եղած և լինելու ազգային գործերից շինել է տալիս մի նոր ուսումնարան իւր կալուածոց մէջ՝ նորա շրջակայքը գտնվող ամեն ազգի և դաւանութեանց պատկանեալ գիւղացի տղայոց համար, որը կառավարվումէ այսօր նոյն բարերարի ծախքով։ Իսկ Սիմֆերոպոլում՝ շնորհիւ իւր մէջ գտնուած բարեպաշտ Հայ հասարակութեան և իրանից ընտրուած արիաջան անդամների, միացեալ եռանդով կառուցուեց մի փառաւոր ուսումնարան՝ բաղկացեալ չորս ընդարձակ դասարաններից, և կից մի ահագին դահլիճով թատրօնական ներկայացումների համար։ Նոյն ուսումնարանի բակում շինուեց նաև դպրոցի և եկեղեցւոյ պահարանների համար շքեղ բնակարաններ։ Այս բոլոր շինութեանց համար հասարակութիւնը ծախսեց մօտ 11 հազար բուբլորոյ մէջ է հաշվում նաև եկեղեցւոյ երկաթէ վանդակապատ պարիսպը, որոյ շինութիւնը ցայսօր շարունակվումէ։ Սորա օրհնութեան և բացման հանդէսը վայելուչ կերպով կատարուեց ներկայ տարւոյ Սեպտեմ: ամսոյ 12ին ի ներկայութեան խուռն բազմութեան Հայազգի եղբարց արանց և կանանց։ Զկնի աւարտման Ս. Պատարագի կատարուեց հոգեհանգիստներ, նախ՝ Հայոց ընդհանուր ի Քրիստոս ննջեցելոց համար, երկրորդ՝ դպրոցի անմահ բարերար Հանգ. Մերկերիոս Մոմճեանցի, որ է հիմնադիրն և բուն պատճառը ներկայ դպրոցի շինութեան և պահպանութեան, երրորդ՝ երջանկայիշատակ Տիկին Ե. Դոդոխեանցի, սա ևս երկրորդ բարերարն է նոյն դպրոցին։ Իւր թողած անշարժ կայ-

քովն, որից այսօր կըստացուի շահ մեծ հազար երկու հարիւր մանէթի։ Այս հոգեհանգիստները կատարուելուց վերջը՝ հանդիսականաց բազմութիւնը եկեղեցական ուխտիւ դիմեց նորաշէն ուսումնարանի նախապէս պատրաստուած մեծ դահլիճը՝ ուր կատարուեց և գպրոցի օրհնութեան և բացման հանդէսը։ Նոյն շինութեան գլուխ կեցող մասնաւորաժողովի արիաջան անդամների վաստակը, իւրեանց առատաձեռն զոհաբերութեանց և քրտնաջան աշխատութեան համար, շնորհակալութեան արժանի է։

Այսպէս էլ սոյն ամի Հոկտեմբեր ամսոյ 15ին ի ներկայութեան եկեղեցաշէն բարերար Աղա Խլէպնիքեանցի, ընդհանուր Հայ և օտարազգի հասարակութեան Մելիտոպոլ քաղաքի՝ կատարուեց նոր Եկեղեցւոյ հիմքի ամենափառաւոր օրհնութիւնը։ Վիճակաւոր Առաջնորդի հեռաւորութեան պատճառով Հոգևոր իշխանութեան հրամանով ինձ վիճակուեց գնալ Մելիտոպոլ և տեղական Տէր Գէորգ Ք. Թորոսեանցի հետ կատարել հիմնարկութեան հանդէսը։ Ս. Պատարագից յետոյ ժամը 11½, Հոգևոր դասը զգեստաւորուած և պատշաճաւոր հանդիսով գուրս գալով աղօթատնից, խուռն բազմութեամբ շրջապատուած, և ըստ պատշաճին շարական ասելով՝ դիմեց դէպի նոյն իսկ բակում կառուցանելի նոր եկեղեցւոյ արդէն խորացուցեալ հիմունքը, ուր նախապէս ունելով ամենայն ինչ պատրաստի՝ կատարուեց յանուն Աստուծոյ Ս. Աստուածածնայ լինելու եկեղեցւոյ հիմքի օրհնութեան փառաւոր հանդէսը ըստ ամենայնի համաձայն կարգաց և կանոնաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ։ Հանդէսը վերջացաւ ժամը 1½ին։

Մելիտոպոլի Հայոց հասարակութիւնը չընայելով իւր խմբի թակաւորութեանը և նոցա էլ մեծագոյն մասին անկարողութեանը, ցոյց տուեց իւր շնորհակալութեան հաւատքը եկեղեցաշէն Աղա Խլէպնիքեանցին՝ ի պատիւ՝ ճաշ տալով։ ուր հրաւիրուած էին նաև օտար ազգիք և յատկապէս քաղաքական Նախագահը, Քաղաքապետը, Նահանգապետը և իւր Օգնականը, Վերատեսուչը, Հաշտարար դատաւորը, Քաղ. Վարչութեան անդամներն ու Ատենադպիրը, տեղւոյն Նօտարները և այլք։ Ճաշի ժամանակ նուագումբ Պ. Արբելեան Նալպանդեանց Փորտոպիանոյի վերայ։ Սեղանի վերայ ճաշկերութի ժամանակ առաջարկուեցին կենաց բաժակներ ըստ պատշաճին։ Պ. Պետրոս Ս. Թոփալեանցը խոստացաւ կանգնեցնել իւր սեպհական ծախքով նոյն եկեղեցւոյ ոսկեզօծ մեծ խաչկալը իւր պարագաներով։ Ճաշկերոյթը և խնճոյքը ուրախ և զուարթ շարունակուեցին մինչև ժամը 12։ Ճաշկերոյթը հասարակութեան ընտրութեամբ պատրաստուել էր կենդրոնական հիւրանոցի դահլիճում Պ. Յովակիմ Սարքյեանի հոգացողութեամբ։ իսկ Պ. Սարքյեան և իւր համեստափայլ ընտանիք յուսացածից աւելի փութաջանութեամբ և հոգացողութեամբ կարգադրած լինելով ճաշը և տնձամբ սպասաւորելով՝ հանդիսականաց՝ ջերմաջերմ շնորհակալութեանց ար-

ժանացան։ Մելիտոպոլի հասարակութեան մէջ պատուաւոր տեղ բռնում է Երեսփոխան Պ. Գէորգ Խարամիղեան՝ որ եկեղեցու բակում մի դպրոցի շինութեան հոգսը իւր վերայ առած լինելով՝ աշխատում է ի գլուխ հանել։ Պ. Խարամիղեան մտադիր է գերեզմանոցում մի փոքրիկ մատուռ ևս շինել, որ ննջեցեալները փոխանակ հասարակաց եկեղեցում դրուելու մինչև թաղումը՝ այդ մատրան մէջ դրուին։ Փառք և պատիւ Մելիտոպոլի հասարակութեան, որ այդպէս փոյթեռանդն է դէպի իւր եկեղեցական գործերը։

Օգ. Քահ. Կոպճակճեանց։

1 Նոյեմ. 1885 —ի
Սիմֆերոպոլ։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ

Ի նպաստ Ճեմարանի Մայր Աթոռոյս։ Պ. Ստեփաննոս Պօղոսեան Գրիգորեանցի ձեռքով. Ս. Պետերբուրգից։

1.	Պ. Յովսէփ Իզմիրեան	25
2.	Պ. Յարութիւն Քանանեան	25
3.	Պ. Բուրջալեան	25
4.	Պ. Մ. Սանասարեան	100
5.	Պ. Յարութիւն Սարգսեան	15
6.	Պ. Ստեփան Գրիգորեան	15
7.	Պ. Խօջիենաթեան	25
8.	Պ. Ամիրաղեան	20
9.	Պ. Ղազարոս Խաֆաֆեան	10
10.	Պ. Յարութիւն Ադիմեան	10
11.	Պ. Շաքպաղ Ղամաղեան	10
12.	Պ. Աղէքսանդր Դաւթեան	3
13.	Պ. Գենիբեանդինէ	10
14.	Պ. Վ. Տէր Ստեփանեան	10
		303

Ձեռամբ Արժ. Գէորգ Քահանայ Խանթարճեանի

		Ռուբլի.
1.	Պ. Յովսէփ Իզմիրեան	25
2.	Պ. Մկրտիչ Սանասարեան	25
3.	Եկեղեցի Հայոց Ս. Պետերբուրգի	25
4.	Պ. Յովհաննէս Դիլիանեան	10
5.	Պ Կարապետ Եղեան	10
6.	Պ. Յովհաննէս Լալայեան	5
		100